ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2282-Ա/2 **«03» նոյեմբերի, 2023 թ.**

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 2024» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Մասնագիտական վերապատրաստում 2024» մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
03 նոյեմբերի, 2023 թ.
N 2282-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**) կազմակերպում է **«Մասնագիտական վերապատրաստում 2024» մրցույթը** (այսուհետ՝ **Մրցույթ)**:

Մրցույթն ուղղված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող գիտական կազմակերպությունների և բուհերի աշխատակիցների, այդ թվում՝ երիտասարդ գիտական կադրերի մասնագիտական վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանը:

Մրցույթին մասնակցելու հայտը լրացնում և ներկայացնում է Հայտատուն՝ **Կոմիտեի** հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի միջոցով (https://grants.hesc.am)՝ մինչև **2024 թվականի հունվարի 26-ը**: Հայտերի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է **Կոմիտեի** պաշտոնական ինտերնետային կայքում (http://hesc.am):

Պահանջվող փաստաթղթերը **Կոմիտե** են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 09:00-13:00 և 14:00-18:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 808 սենյակ) մինչև **2024 թվականի փետրվարի 2-ը** ներառյալ:

Մրցույթի վերաբերյալ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ **Կոմիտեի** գիտության քաղաքականության վարչության գիտական մշակումների պատվերի ձևավորման և ինովացիոն ծրագրերի բաժնում՝ աշխատանքային օրերին, ժամը 14:00 - 18:00, հեռ.՝ +374 10 210 140 (105):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«03» նոյեմբերի, 2023 թ.
N 2282-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ
«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 2024» ՄՐՑՈՒՅԹԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մրցույթը

1.1. **«Մասնագիտական վերապատրաստում 2024»** մրցույթն (այսուհետ՝ **Մրցույթ**) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ **Նախարար**) 2023 թվականի նոյեմբերի 3-ի N 2282-Ա/2 հրամանի:

1.2. **Մրցույթը** կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**)՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով»:

1.3. **Մրցույթն** ուղղված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող գիտական կազմակերպությունների և բուհերի (այսուհետ՝ **Կազմակերպություն**) աշխատակիցների, այդ թվում՝ երիտասարդ գիտական կադրերի մասնագիտական վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանը:

1.4. **Մրցույթն** իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1):

1.5. **Մրցույթին** մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ (այսուհետ՝ **Հայտ**), որը ներառում է գիտական նախագիծ (այսուհետ՝ **Նախագիծ**) և պահանջվող այլ փաստաթղթեր/տվյալներ:

1.6. **Նախագիծը (**Հավելված N 2.2) պետք է նպաստի Հայտատուի մասնագիտական աճին, ինչպես նաև արտերկրի լավագույն գիտական կազմակերպությունների փորձն ու հմտությունները յուրացնելուն:

1.7. **Մրցույթի** հրավերի փաթեթը սահմանում է դրան դիմելու ընթացակարգը, չափանիշները, **Հայտերի** գնահատման գործընթացը և շահառու **Հայտերի** ֆինանսավորումն ու հաշվետվողականությունը:

2. Նպատակը

2.1. **Մրցույթի** նպատակներն են.

- աջակցել հետազոտողների, երիտասարդ գիտնականների մասնագիտական որակավորման բարձրացմանը,
- մեծացնել **Կազմակերպության** գիտական ներուժը,
- հետազոտողներին ընձեռել արտերկրի լավագույն գիտական կազմակերպություններում և բուհերում վերապատրաստվելու հնարավորություն,
- օգտագործել և փոխառել գիտահետազոտական գործունեության մեջ առաջատար երկրների փորձն ու հմտությունները,
- նպաստել հետազոտողների ինտեգրմանը միջազգային հետազոտական տարածքում,
- ներգրավել Սփյուռքի գիտական ներուժը,
- նպաստել գիտության ոլորտում միջազգային համագործակցության զարգացմանը:

3. Ժամկետները

3.1. Վերապատրաստման տևողությունը կարող է լինել 2-ից մինչև 12 ամիս:

3.2. **Մրցույթին** դիմելու վերջնաժամկետը 2024 թվականի հունվարի 26–ն է: (**Հայտերի** ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

3.3. Թղթային տարբերակով **Կոմիտե** ներկայացվող փաստաթղթերի վերջնաժամկետը 2024 թվականի փետրվարի 2-ն է:

3.4. **Մրցույթի** արդյունքներն ամփոփվելու են մինչև 2024 թվականի մայիսի 1-ը:

3.5. **Պայմանագրերը** կնքվում են **Մրցույթի** արդյունքները հայտնի դառնալուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

3.6. **Հայտատուն Նախագծի** իրականացման ավարտից հետո 10 օրյա ժամկետում **Կոմիտե** է ներկայացնում ամփոփիչ հաշվետվություն, իսկ 4 ամսից ավելի

վերապատրստման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի ավարտին նաև ընթացիկ հաշվետվություն:

3.7. Վերապատրաստումը սկսվում և իրականացվում է **Պայմանագրում** նշված ժամկետներում:

4. Հայտատուն

4.1. **Հայտը** ներկայացնում է **Հայտատուն**:

4.2. **Հայտատու** կարող է լինել՝

- մագիստրատուրայի ուսանողը, ով ընդգրկված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման որևէ ծրագրում (այսուհետ՝ **Խումբ 1**),
- 1989 թվականի հունվարի 1-ից հետո ծնված ասպիրանտը կամ հայցորդը, ով **Կազմակերպությունում** ձևակերպված է որպես հայցորդ **Մրցույթին** դիմելու վերջնաժամկետից առնվազն մեկ տարի առաջ (այսուհետ՝ **Խումբ 2**),
- 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված, գիտական աստիճան ունեցող և գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձը, ով **Կազմակերպության** հետ ունի աշխատանքային պայմանագիր (այսուհետ՝ **Խումբ 3**):

4.3. **Հայտատուի** տարիքային շեմը կարող է բարձրանալ՝

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ հավելյալ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդում գտնված լինելու դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար հավելյալ 1 տարով:

4.4. **Հայտատուն** պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ ռեզիդենտ:

4.5. **Խումբ 3-ի** դեպքում՝ **Հայտատուն** վերջին հինգ տարիների համար (2019 - 2024 թթ.), տվյալ ուղղությամբ պետք է ներկայացնի՝

- առնվազն երկու գիտական հրապարակում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Գիտության հղման ընդլայնված ինդեքս (Science Citation Index Expanded (SCIE)), Հասարակական գիտությունների հղման ինդեքս (Social Sciences Citation Index (SSCI)),

Նորահայտ աղբյուրների հղման ինդեքս (Emerging Sources Citation Index (ESCI)), Արվեստի և հումանիտար գիտությունների հղման ինդեքս (Arts&Humanities Citation Index (AHCI))), **կամ** Գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունների հրապարակած գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, **կամ** Սիմագո Ջըրնըլ էնդ Քանթրի Ռենք (SCImago Journal & Country Rank) պորտալի առնվազն չորրորդ քառորդ (Q4), իսկ գիտաժողովի նյութերի դեպքում՝ առնվազն երկրորդ քառորդին (Q2) համարժեք ԷսՋեյԱր (SJR) ինդեքս (SCImago Journal Rank Indicator) ունեցող պարբերականներում,

- **կամ** մեկ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Վեբ օֆ Սայնս (Web of Science™) գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում:

4.6. Բեալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն ներկայացնելու դեպքում **Հայտը** գիտական փորձաքննության ենթարկելու հարցը կքննարկվի **Հայտերի** գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդում (այսուհետ՝ **Խորհուրդ**):

4.7. **Հայտատուն** սույն **Մրցույթին** չի կարող ներկայացնել մեկից ավելի **Հայտեր**:

4.8. **Հայտատուն Կազմակերպությունում** չպետք է զբաղեցնի գիտական ստորաբաժանման (խումբ, լաբորատորիա, բաժին, կենտրոն և այլն) ղեկավարի պաշտոն կամ հանդիսանա հետևյալ մրցույթների շահառու հայտի ղեկավար.

- «Առաջատար հետազոտությունների աջակցության»,
- «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության» (2021),
- «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցություն - 2023»,
- «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» (2022; 2023; 2023/2),
- «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիր 2023»:

4.9. **Հայտատուն** պետք է տիրապետի անգլերենին՝ առնվազն խոսակցական մակարդակով:

5. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

5.1. **Կազմակերպությունը** պետք է լինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող:

5.2. **Կազմակերպությունը պետք է** աջակցի **Նախագծի** իրականացմանը:

5.3. **Կազմակերպությունը Հայտատուին** է տրամադրում **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական խորհրդի եզրակացությունը (Board Conclusion), որտեղ նշվում է վերապատրաստման (**Նախագծի**) համապատասխանությունը **Կազմակերպության** գիտական ուղղություններին, դրա կարևորությունը և արդիականությունը:

5.4. Կազմակերպության և ֆինանսավորման երաշխավորված **Հայտի Հայտատուի** միջև իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 201.2-րդ հոդվածով:

5.5. **Կազմակերպության, Կոմիտեի** և ֆինանսավորման երաշխավորված **Հայտի** Հայտատուի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր (այսուհետ՝ **Պայմանագիր**):

6. Ընդունող կազմակերպությունը և ղեկավարը/մենթորը

6.1. Ընդունող է համարվում այն օտարերկրյա գիտական կազմակերպությունը, համալսարանը, կամ հետազոտական բաղադրիչ ունեցող ձեռնարկությունը (research-intensive enterprise), որտեղ **Հայտատուն** պատրաստվում է անցկացնել վերապատրաստումը (այսուհետ՝ **Ընդունող կազմակերպություն**):

6.2. **Ընդունող կազմակերպությունը** պետք է պաշտոնապես հաստատի **Հայտատուին** ընդունելու մտադրությունը:

6.3. **Ընդունող կազմակերպությունում Հայտատուն** պետք է ունենա **ղեկավար/մենթոր**, ով կհամակարգի վերապատրաստման ընթացքում նրա մասնագիտական գործունեությունը:

6.4. **Ղեկավարը/մենթորը** պետք է ունենա գիտական աստիճան (PhD) կամ համարժեք որակավորում և հանդիսանա **Ընդունող կազմակերպության** աշխատակից՝ առնվազն մինչև **Նախագծի** ավարտը:

6.5. **Ղեկավարը/մենթորը** պետք է իր պաշտոնական էլ. հասցեից **Կոմիտեի** grants@hesc.am էլ. հասցեին ուղարկի գրություն, որտեղ նշված կլինի իր համաձայնությունը **Հայտատուին** ընդունելու, ընդունման ժամկետների և ներկայացված գիտական ծրագրով հետազոտություններ իրականացնելու վերաբերյալ: Գրության մեջ **ղեկավարը/մենթորը** նշում է նաև այն ծախսերը, որոնք **Ընդունող կազմակերպությունը** պատրաստվում է հոգալ **Հայտատուին** ընդունելու ընթացքում (եթե նման ծախսեր նախատեսվում են):

6.6. **Ղեկավարը/մենթորը** իր հավանությունն է տալիս **Նախագծի** օրացուցային պլանին (ըստ եռամսյակների) կամ Գանտի աղյուսակին:

7. Ակնկալվող արդյունքները

7.1. **Ծրագրի** շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները հրապարակելիս որպես հեղինակի աշխատավայր (affiliation) պետք է նշվի **Կազմակերպությունը**:

7.2. **Նախագծի** շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է նշել **Կոմիտեի** կողմից ստացած աջակցության մասին.

This work was supported by the Higher Education and Science Committee of RA (Research project № _____).

II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

8. Հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը

8.1. **Հայտը** լրացնում և ներկայացնում է **Հայտատուն**՝ **Կոմիտեի** հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի՝ grants.hesc.am (այսուհետ՝ **Համակարգ**) միջոցով, մինչև 2024 թվականի հունվարի 26-ը: (**Հայտերի** ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

8.2. **Համակարգի** միջոցով **Հայտն** ուղարկելուց հետո **Հայտատուն** թղթային տարբերակով **Կազմակերպություն է** ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

- **Համակարգում** ձևավորված և ծածկագիր ստացած **Հայտի** տիտղոսաթերթը, ֆինանսական նախահաշիվը (այսուհետ՝ **Նախահաշիվ**) և **Հայտատուի** դիմումը,
- **Կազմակերպության** (բուհերի դեպքում ֆակուլտետի) գիտական խորհրդի եզրակացությունը, որը պետք է պարունակի տեղեկություն **Նախագծի** նպատակի, կարևորության և արդիականության վերաբերյալ,
- **Կազմակերպության** ղեկավարի կողմից գրություն այն մասին, որ **Հայտատուն** հանդիսանում է **Կազմակերպության** աշխատակից և **Նախագծի** ավարտից հետո նախատեսում է ընդգրկել նրան (շարունակել) Կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ծրագրում,
- **Խումբ 1-ի դեպքում** մագիստրատուրայի ուսանող լինելը հավաստող տեղեկանք, որտեղ նշված է ուսումնառության տեսակը (առկա, հեռակա), ընդունվելու տարին, **Կազմակերպությունը**,
- **Խումբ 2-ի դեպքում** ասպիրանտ կամ հայցորդ լինելը հավաստող տեղեկանք, որտեղ նշված է ուսումնառության տեսակը (առկա, հեռակա), ընդունվելու տարին, **Կազմակերպությունը**, թեման և գիտական ղեկավարը,
- **Հայտատուի** կենսագրությունը (CV),
- **Ղեկավարի/մենթորի** կենսագրությունը (CV),
- **Ընդունող կազմակերպության** կողմից պաշտոնական գրություն **Հայտատուին** ընդունելու մտադրության վերաբերյալ,
- **Ղեկավարի/մենթորի** գրությունը, **Հայտատուին** ընդունելու և ներկայացված գիտական ծրագրով հետազոտություններ իրականացնելու վերաբերյալ,
- **Հայտատուի**՝ անգլերենի իմացության մասին տեղեկանք (առկայության դեպքում):

8.3. Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:

8.4. **Կազմակերպության** ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ) մինչև 2024 թվականի փետրվարի 2-ը ներառյալ մեկ ընդհանուր փաթեթով, **Կազմակերպության** ղեկավարի գրությամբ (Հավելված N 2.3), առձեռն **Կոմիտե** է ներկայացնում **Կազմակերպության** կողմից ներկայացված բոլոր **Հայտերին** վերաբերող փաստաթղթերը, աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-13:00 և 14:00-18:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 808 սենյակ):

8.5. **Մրցույթի** վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ **Կոմիտեից**, հեռախոս՝ (010) 210140 (ներքին 105), էլեկտրոնային փոստ՝ scexpert@hesc.am:

Ուշադրություն. **Կոմիտեն** քննարկման է ընդունում միայն **Համակարգի** կողմից ձևավորված և ծածկագիր ստացած **Հայտերը**: **Հայտերը**, որոնք չեն ուղարկվել վերը նշված ընթացակարգի և ժամկետների համաձայն, չունեն ծածկագիր, քննարկման ենթակա չեն:

9. Նախահաշվի կազմությունը

9.1. **Նախահաշիվը** կազմված է «Վերապատրաստման վճար» և «Այլ ծախսեր» հոդվածներից:

9.2. Ֆինանսավորման առավելագույն չափը կարող է լինել՝

- **Խումբ 1-ի և 2-ի** դեպքում՝ 10.600.000 ՀՀ դրամ 12 ամսվա համար:
- **Խումբ 3-ի** դեպքում՝ 11.800.000 ՀՀ դրամ 12 ամսվա համար:

9.3. **Նախահաշվի** «Վերապատրաստման վճար» հոդվածը կազմելիս **Հայտատուի** ամսական վարձատրության առավելագույն չափն ընդունել՝

- **Խումբ 1 և 2**-ի դեպքում՝ 800.000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները),
- **Խումբ 3** դեպքում՝ 900.000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները):

9.4. «Այլ ծախսեր» հոդվածի հաշվարկային չափն ընդունել մինչև 1.000.000 ՀՀ դրամ, որը կարող է օգտագործվել արտերկիր մեկնելու և վերադառնալու ծախսերի համար (վիզա, ճանապարհածախս, ապահովագրություն և այլն):

9.5. **Նախահաշվով** ներկայացված բոլոր ծախսերը պետք է հիմնավորել **Նախահաշվի** մեկնաբանության մեջ:

9.6. **Նախահաշվի** հիմնավորվածությունը և բաշխումը կարող են լրամշակվել **Խորհրդի** առաջարկությամբ և **Հայտատուի** համաձայնությամբ:

III. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

10. Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին

10.1. **Կոմիտեն** ստուգում է

- **Հայտերի** համապատասխանությունը **Մրցույթի** հրավերի պայմաններին,

- Բեալի ցանկերում *(Beall's list, https://beallslist.net/)* ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատությունների առկայությունը **Հայտում**:

10.2. **Հայտը չի քննարկվում, եթե՝**

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ նախագծի հետ,
- **Հայտատուի** կողմից նախկինում իրականացված նախագծի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- **Հայտատուն** միաժամանակ հանդիսանում է այլ նմանատիպ վերապատրաստման մրցույթի շահառու:

10.3. Ստուգման արդյունքները տրամադրում են **Խորհրդին**:

10.4. **Խորհուրդը** քննարկում և հաստատում է գիտական փորձաքննության ենթակա **Հայտերի** ցանկը:

11. Գիտական փորձաքննությունը

11.1. **Խորհուրդը Կոմիտեի** հետ համատեղ մշակում ու հաստատում է **Հայտերի** գիտական փորձաքննության առաջին և երկրորդ փուլերի գնահատման թերթիկները և վարման ընթացակարգը:

11.2. **Կոմիտեի, Խորհրդի** և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

12. Գիտական փորձաքննության առաջին փուլը

12.1. Գիտական փորձաքննության առաջին փուլում **Խորհուրդը**, հաշվի առնելով **Նախագծի** ընդարձակ ամփոփագիրը (Հավելված N 2.4), **Հայտատուի** գիտական հետագիծը (track record), մասնագիտական կենսագրությունը (CV), **Ընդունող**

կազմակերպությունը և **ղեկավարի/մենթորի** համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին, կոնսենսուսի սկզբունքով ձևավորում է առաջին փուլը հաղթահարած **Հայտերի** ցանկը, որոնք անցնում են գիտական փորձաքննության երկրորդ փուլ:

12.2. Առավելություն կտրվի այն **Հայտերին**, որտեղ **ղեկավարը/մենթորը** վերջին 10 տարիների ընթացքում հանդիսացել է Եվրոպական Հետազոտական Խորհրդի (European Research Council (ERC)) որևէ գիտական դրամաշնորհի շահառու:

12.3. Գիտական փորձաքննության երկրորդ փուլ չանցած **Հայտերի Հայտատուները Համակարգի** միջոցով տեղեկացվում են այդ մասին:

13. Գիտական փորձաքննության երկրորդ փուլը

13.1. Գիտական փորձաքննության երկրորդ փուլում փորձագետը գնահատում է **Հայտը՝ Նախագիծը** (Հավելված N 2.2), վերջինիս խնդրի արդի վիճակը, նորույթը, հեռանկարը, իրականացման նախադրյալները, համապատասխանությունը ոլորտի զարգացման տենդենցներին, աշխատանքի ծավալի և իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, միջգիտակարգային առնչությունները, **Կազմակերպությունը**, **Ընդունող կազմակերպությունը**, ղեկավարը/մենթորը, ինչպես նաև **Մրցույթի** առանձնահատկություններից բխող այլ հարցեր, իսկ **Խորհուրդը Հայտատուի** հետ անցկացնում է հարցազրույց:

13.2. **Հայտը** գնահատվում է առնվազն երկու փորձագետի կողմից: Որպես փորձագետ կարող է հանդես գալ նաև **Խորհրդի** անդամը:

13.3. Յուրաքանչյուր **Հայտի** համար փորձագետը լրացնում է փորձագետի գնահատման թերթիկ:

13.4. Փորձագետի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

13.5. Երկու փորձագետների գնահատականները փորձագետի առավելագույն գնահատականի 30 և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում **Հայտը** գնահատվում է երրորդ փորձագետի կողմից:

14. Հարցազրույցը

14.1. **Խորհուրդը Հայտատուի** հետ անցկացնում է հարցազրույց:

14.2. Յուրաքանչյուր **Հայտի** համար **Խորհրդի** անդամը լրացնում է հարցազրույցի գնահատման թերթիկը:

14.3. Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

15. Գնահատման արդյունքները

15.1. **Հայտի** գնահատականը գիտական փորձաքննության երկրորդ փուլի արդյունքում ձևավորված երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և հարցազրույցի գնահատականների միջին թվաբանականի գումարն է, իսկ եթե **Հայտը** գնահատվել է երեք փորձագետի կողմից, ապա **Հայտի** գնահատականը փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականի (երեք փորձագետների գնահատականների հավասար տարբերությունների դեպքում՝ երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականի) և հարցազրույցի գնահատականների միջին թվաբանականի գումարն է:

15.2. **Կոմիտեն** գիտական փորձաքննության երկրորդ փուլ անցած **Հայտերի** գնահատականների հիման վրա ձևավորում է **Հայտերի** վարկանիշային ցանկ՝ գնահատականների նվազման կարգով և ներկայացնում **Խորհրդին**՝ քննարկման:

15.3. **Խորհուրդը** հաստատում է **Հայտերի** գնահատականների վարկանիշային ցանկը և **Կոմիտեի** նախագահին առաջարկում գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը::

15.4. **Կոմիտեն**, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը և **Նախարարի** հաստատմանն է ներկայացնում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը և ֆինանսավորման չափը:

15.5. **Նախարարի** հրամանով հաստատվում է ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը և ֆինանսավորման չափը:

15.6. **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը հրապարակվում է **Կոմիտեի** պաշտոնական կայքում:

15.7. **Կոմիտեն Կազմակերպության** ղեկավարին տրամադրում է տվյալ **Կազմակերպության** շահառու **Հայտերի** ցանկը:

15.8. **Կոմիտեն Համակարգի** (grants.hesc.am) միջոցով **Հայտատուին** տրամադրում է գիտական փորձաքննության արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16. Պայմանագրերի կնքումը

16.1. **Կոմիտեի**, **Կազմակերպության** և ֆինանսավորման երաշխավորված **Հայտի Հայտատուի** միջև կնքվում է **Պայմանագիր,** որը **Համակարգի** միջոցով տրամադրվում է **Հայտատուին**:

16.2. **Պայմանագրերը** կնքվում են **Մրցույթի** արդյունքները հայտնի դառնալուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

16.3. **Նախագծերը** սկսվում և իրականացվում են **Պայմանագրում** նշված ժամկետներում:

17. Հաշվետվությունը

17.1. **Նախագծի** իրականացման ավարտից հետո **Հայտատուն** 10 օրյա ժամկետում **Կոմիտե** է ներկայացնում ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ պլանավորված արդյունքների և ստացված փաստացի արդյունքների համապատասխանության և հաշվետվությունն ընդունելու մասին:

17.2. 4 ամսից ավելի վերապատրստման դեպքում **Հայտատուն Նախագծի** իրականացման ընթացքում, ֆինանսավորման մեկնարկից յուրաքանչյուր 3-րդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը, **Կոմիտե** է ներկայացնում ընթացիկ հաշվետվություն, որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

17.3. **Նախագծի** իրականացման ընթացքում **Կոմիտեն** կարող է իրականացնել **Նախագծի** մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել **Խորհրդին**:

17.4. **Կոմիտեն** կարող է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծի** անոտացիան և հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

18. Լրացուցիչ տեղեկություններ

18.1. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող **Հայտ** և այնուհետև հաշվետվություն ներկայացնելու դեպքում պետք է առաջնորդվել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

18.2. **Հայտերը** քննարկելիս առավելություն կտրվի այն **Նախագծերին**, որոնց իրականացման ընթացքում **Հայտատուն** հնարավորություն կունենա նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել լաբորատորիաներում, որոնք հագեցած են այնպիսի գերժամանակակից սարքավորումներով, որոնցից առկա են կամ գնվելու են **Կազմակերպությունում**:

18.3. Վերապատրաստման ընթացքում շահառուն կարող է պահպանել իր ներգրավվածությունը **Կոմիտեի** կողմից ֆինանսավորվող բոլոր մրցույթներում՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ յուրաքանչյուր հայտի ղեկավարից:

18.4. **Նախագծի** հաջող կատարումը կդիտարկվի որպես առավելություն շահառուի ներգրավմամբ **Կոմիտեի** հայտարարած հետագա դրամաշնորհային ծրագրերին դիմելիս:

19. Նախագծի ֆինանսավորման դադարեցումը

Կոմիտեն կարող է դադարեցնել **Նախագծի** ֆինանսավորումը, եթե.

- սահմանված ժամկետում չի ներկայացվել ընթացիկ հաշվետվություն կամ հաշվետվության վերաբերյալ **Խորհրդի** կողմից տրվել է բացասական եզրակացություն:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.1 Մաթեմատիկա	4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն
1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	4.2 Բուսաբուծություն
1.3 Ֆիզիկա և աստղագիտություն	4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
1.4 Քիմիա	4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ	***5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.6 Կենսաբանական գիտություններ	5.1 Հոգեբանություն
2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	5.2 Տնտեսագիտություն և գործարարություն
2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն	5.3 Մանկավարժական գիտություններ
2.2 էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	5.4 Սոցիոլոգիա
2.3. Մեխանիկա	5.5 Իրավունք
2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն	5.6 Քաղաքական գիտություններ
2.5 Քիմիական տեխնոլոգիաներ	5.7 Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
2.6 Նյութագիտություն	5.8 Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
2.7 Բժշկական սարքաշինություն	***6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
2.8 Էկոլոգիա	6.1 Պատմություն, հնագիտություն
2.9 Կենսատեխնոլոգիա	6.2 Լեզվագիտություն, գրականագիտություն
2.10 Նանոտեխնոլոգիա	6.3 Փիլիսոփայություն, էթիկա
3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6.4 Աստվածաբանություն, կրոնագիտություն
3.1. Ընդհանուր բժշկություն	6.5 Արվեստագիտություն
3.2. Կլինիկական բժշկություն	
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա	

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն կամ անգլերեն, մինչև 10 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. **Համառոտ բնութագիրը** (անոտացիա)

2. **Գիտական հետազոտություն** (հետազոտության կարևորությունը, իրագործելիությունը, հնարավոր ազդեցությունը, մեթոդաբանությունը և այլն)

3. **Օրացուցային պլանը** (ըստ եռամսյակների, Գանտի աղյուսակ)

4. **Վերապատրաստման նպատակահարմարությունը** (ընդունող կազմակերպության, ղեկավարի/մենթորի ընտրության նպատակահարմարությունը և համագործակցության հեռանկարը, վերապատրաստման նպատակը, ղեկավարի/մենթորի գիտական կադրեր ղեկավարելու փորձը, ընդունող կազմակերպությունում Հայտատուի աշխատանքային ծանրաբեռնվածության աստիճանը և այլն)

5. **Տվյալ ուղղությամբ ունեցած ձեռքբերումները** (գիտական հոդվածներ, դրամաշնորհներ, գիտաժողովների մասնակցություն և այլն)

6. **Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները** (գիտական հոդվածներ, գիտաժողովների նյութեր և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ)

7. **Օգտագործված գրականության ցանկը**

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

Խնդրում եմ ընդունել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Մասնագիտական վերապատրաստում 2024» մրցույթին __(կազմակերպության անվանում)_ից ներկայացված _____ ծածկագրերով հայտերը:

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) (ազգանուն անուն)

«____» _____ 2024 թ.

Նախագծի վերնագիրը

Ընդարձակ ամփոփագիրը

Ընդարձակ ամփոփագիրը գնահատվում է գիտական փորձաքննության առաջին փուլում, հարկավոր է ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 2 էջ:
*Ընդարձակ ամփոփագիրը պետք է լինի **Նախագծի** հակիրճ տարբերակը՝ ներառելով հետազոտության կարևորությունը և վերապատրաստման նպատակահարմարությունը:*